


# ՄԱՐԴԻԿ ԶՎԵԱՐԿՈՒՄ ԵՆ ՈՏՔԵՐՈՎ

Ընթացանության ժամանակ՝ 5 րոպե

Վերջին հիսուն տարիների ընթացքում աշխարհի բնակչությունն ավելի քան կրկնապատկվել է՝ 1970 թ. 3.7 միլիարդից 2020թ. հասնելով 7.8 միլիարդի, իսկ մինչև 2100թ. այն ամենայն հավանականությամբ կհասնի 11 միլիարդի<sup>1</sup>: Աշխարհում մարդկանց աճող թվաքանակը գլոբալ տաքացման հիմնական պատճառներից մեկն է: Այս տեսանկյունից դժվար է պնդել, որ աշխարհում ավելի շատ մարդու կարիք կա:

Այնուամենայնիվ, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Արևելյան Եվրոպայի շատ երկրների բնակչությունները զգալիորեն նվազել են (Գծապատկեր 1): Սակայն, Եվրոպական միության երկրների (անդամ-պետությունների) համար դա այնքան էլ մեծ խնդիր չէ, քանի որ նրանք բոլորն ընդունել են «Եվրոպայի քաղաքացի» հայեցակարգը: Տարբերությունն առանձնապես մեծ չէ՝ լատվիացին կամ բուլղարացին ապրում է Լատվիայում, Բուլղարիայում թե Գերմանիայում, ինչպես տարբերություն չէր լինի, եթե ամերիկացին ԱՄՆ մի նահանգից տեղափոխվեր մեկ այլ նահանգ:


**Գծապատկեր 1. Բնակչության փոփոխությունը՝ ըստ ընդհանուր բնակչության տոկոսային հարաբերակցության, 2000-2020**



Աղբյուր՝ World Bank

Եվրոպական միության ծրագիրն աստիճանաբար «Էթնիկ պատկանելության» հայեցակարգը փոխարինում է «քաղաքացիության» սկզբունքով: Դա այն մոտեցումն է, որը տասնամյակներ շարունակ որդեգրել են Կանադայի, Ամերիկայի և Ավստրալիայի նման երկրները: Չարգացող երկրներում շատերը խնդիր ունեն ընկալելու և ընդունելու այն սկզբունքը, որ քաղաքացիության և ազգության հայեցակարգերն, ըստ էության, նույնական են: Այն երկրները, որոնք շարունակում են շեշտադրում կատարել էթնիկ, ռասայական կամ կրոնական պատկանելության հայեցակարգերի վրա, աներկբայորեն գնում են դեպի աղետալի զարգացումների ուղի:

<sup>1</sup> [United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division \(2019\). World Population Prospects 2019, Volume II: Demographic Profiles](#)




FUTURES STUDIO

Think to connect!


Այնուամենայնիվ, Հայաստանի նման փոքր, զարգացող երկրների համար, որոնք այլևս որևէ «ազգային միության» մաս չեն, բնակչության թվաքանակի նվազումը լուրջ մարտահրավեր է: Սովետական միության փլուզումից ի վեր Հայաստանի բնակչությունն անընդհատ անկում է արձանագրել: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 2-ում և Գծապատկեր 3-ում, դա բացառապես արտագաղթի հետևանք է (մարդիկ քվեարկում են իրենց ուղքերով): Արևելյան Եվրոպայի երկրների օրինակները, ինչպիսին են Լատվիան կամ Բուլղարիան, վկայում են, որ մարդիկ հիմնականում արտագաղթում են տնտեսական դրդապատճառներով: Դա ակնհայտորեն այդպես է նաև Հայաստանի պարագայում:

**Գծապատկեր 2. Հայաստանի բնակչությունը, հազար մարդ**



Աղբյուր՝ Armstat

**Գծապատկեր 3. Չուտ միգրացիա և Հայաստանի բնակչության բնական փոփոխություն**



Աղբյուր՝ Armstat

Այսպիսով, ինչ պետք է անի Հայաստանի նման երկիրն իր բնակչությունը կրկնապատկելու համար: Այս հարցի պատասխանը շատ զգայուն է, ուստի հաճախ այն շրջանցվում է: Ակնհայտ է, որ աշխարհը չունի «նվազող բնակչության» խնդիր: Սա նշանակում է, որ Հայաստանի նման երկրներն ավելի շուտ պետք է մտածեն «մարդկանց վերաբնակեցման», քան միայն «ազգային ծնելիության» բարձրացման մասին: Բայց դա իր հերթին բերում է հաջորդ հարցին՝ «ու՞մ կամ ո՞ր մարդկանց վերաբնակեցնել»:

Բնակչության աճի բարձր տեմպի հասնելու առաջին և ամենից ակնհայտ քայլն արդի միգրացիոն քաղաքականության մշակումն է, այդ թվում՝ բնակչության իրավունքի և քաղաքացիության ստացման պարզեցված ընթացակարգերը, առնվազն երկու միջազգային լեզվի պաշտոնականացումը, որպեսզի մարդկանց համար հեշտ լինի ներգաղթելն ու ինտեգրվելը: Պարադոքսն այն է, որ երկրները, որոնք անհանգստացած են իրենց նվազող բնակչությամբ (օրինակ՝ Ռուսաստանը, Հայաստանը և այլն), նույնիսկ չունեն միգրացիայի նախարարություններ: Պարտականություններն ու կարգավորումները հիմնականում պատվիրակված են ու բաշխված մի քանի անգործունակ նախարարությունների և գործակալությունների միջև:

Հայաստանի դեպքում (կամ Ռուսաստանի, կամ նույն իրավիճակում գտնվող մեկ այլ երկրի) Սփյուռքը պետք է լինի ներգաղթի առաջնային թիրախը: Սփյուռքի վրա կենտրոնանալու բացառիկ արժեքն այն է, որ սփյուռքի ներկայացուցիչների մեծ մասն ապրել է ու սովորել զարգացած երկրներում: Սա նշանակում է, որ, սփյուռքի անդամներին ներգրավելով, Հայաստանն արագորեն կվերափոխեր իր հասարակությանը՝ այդպիսով խթանելով նաև սրընթաց տնտեսական աճ:

Մենք պետք է հիշենք, որ արագ տնտեսական աճի ամենակարևոր որոշիչը տնտեսության մեջ և լայն իմաստով հասարակության մեջ սովորելու արագությունն է: Շատ քիչ երկրներ կան, որոնք իրենց սփյուռքի միջոցով թոփաքային տնտեսական աճ խթանելու ներուժ ունեն: Հայաստանն այդ երկրներից մեկն է: Վերջին երեսուն տարիների ընթացքում Հայաստանի բոլոր կառավարությունները տապալել են այդ ներուժի կապիտալիզացիան: Ժամանակակից գիտելիքից ու հմտություններից բացի, սփյուռքի ներկայացուցիչներն իրենց հետ Հայաստան կբերեին իրենց գլոբալ կապերն ու ծանոթությունները՝ դրանով իսկ արագորեն բարելավելով Հայաստանի ու աշխարհի կապը:

«Ապագա հայկականը» շարժումը հիմնադրվեց միավորելու «վիրտուալ ազգին» (աշխարհի հայերին) Հայկական պետության և Հայաստանի կառավարության հետ: Սա նոր «սոցիալական պայմանագիր» է կամ «պետություն-մասնավոր գործընկերություն», որը պետք է հաստատվի երեք գործող միավորների՝ Սփյուռքի, Պետության և Կառավարության միջև:

*Վահե Իսկանդարյան  
Հեղափոխող*

*Դավիթ Թամազյան  
Հիմնադիր գործընկեր*

## Դրույթներ և պայմաններ

### © «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: